

Լեւոն Շանթի ամենափին եւ ամենանոր հրատարակությունները ցուցադրվեցին Հայաստանի ազգային գրադարանում

«Շանթը ծնվել է Թումանյանի հետ, ապրել Իսահակյանի չափ», - Հայաստանի ազգային գրադարանում Լեւոն Շանթի 150-ամյակին նվիրված ցուցադրություն-միջոցառմանը նշեց գրականգետ, գրաքննադատ Արքմենիկ Նիկողոսյանը՝ նկատելով, որ կենսագրական այս զուգահեռներն էրը պատահական համընկնումներ չեն. Շանթի կյանքն ու ստեղծագործությունը սերտ աղերսներ ունեն երկու հայ մեծերի հետ:



Անվանի գրող, բանաստեղծ, դրամատուրգ, մանկավարժ, պետական և հասարակական գործիչ, «Համազգային մշակութային հիմնադրամի» հիմնադիր Լեւոն Շանթի (Լեւոն Նաղաշպետյան կամ Լեւոն Սեդրոսյան) 150-ամյակին նվիրված գրքերի ցուցադրությունը բացվեց Հայաստանի ազգային գրադարանի պետական



կարգավիճակ ստանալու 100-ամյակի միջոցառումների շրջանակում: Ազգային գրադարանի հարուստ հավաքածուից ցուցադրվեցին Լեւոն Շանթի ամենառաջինից գրքերից մինչև ամենավերջին հրատարակությունները՝ 1893-ին լույս տեսած «Լեւոն աղջիկը» գրքից մինչև 21-րդ դարի երկրորդ

տասնամյակում հրատարակված ինը հատորյակը, ինչպես նաև գրական թարգմանությունները, գրողին վերաբերող աշխատություններ...

«Կարենոր ցուցադրություն է: Կարծում եմ՝ նմանատիպ ցուցադրությունները շարունակական կլինեն Ազգային գրադարանում: Եթե անգամ մի մարդ ինչ-որ նոր բան քաղի ցուցադրություններից՝ կարող ենք դրանք ստացված համարել», - ասաց Արքմենիկ Նիկողոսյանը՝ հավելելով, որ իր համար, օրինակ, բացահայտում էր, որ Շանթը թարգմանել է Վոյնիչի «Բոռը»:



Գրականագետը ՀՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից գրադարանին նվիրվեց Լենոն Շանթի երկերի ժողովածուի վերջին 5 հատորները և ընդգծեց, որ Հայաստանի ազգային գրադարանը գրքերի ամենահուսալի պահոցն է:

Միջոցառմանը ներկա էր նաև քաղաքական գիտությունների դոկտոր Լևոն Շիրինյանը: Նա անդրադարձավ Լևոն Շանթ քաղաքական գործչի գործունեությանը՝ նշելով, որ ցուցադրությունը լավ առիթ է Շանթի դերը ևս մեկ անգամ արժևորելու և նրա գրական ու քաղաքական գործունեությանը երիտասարդներին ծանոթացնելու համար:

Միջոցառումը ուղեկցվեց Թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահի այուներին և առաստաղին շարժապատկերների ցուցադրությամբ: Այնուհետև գրադարանի կինոսրահում ցուցադրվեց Լևոն Շանթի կյանքին ու գործունեությանը նվիրված ֆիլմ:

